

ՆՈՒԻՐԱՀԱԻԱՔԻ ԱՐՇԱԻ

Մայիս 2-ին, տասնվեց ՀՄԸՄ-ական երէց սկսուտներ «Mont Royal» լերան աստիճանները բարձրացան մասնակցելու Մոնթրէալի մէջ Autism-է տաղապող երեխաներու ի նպաստ նուիրահաւաքին:

Առաւօտեան ժամը 9:00-ին սկսած այս դրամահաւաք մարզամիջոցը մեծ խանդավառութիւն ստեղծեց մասնակիցներուն մօտ: Անոնք նախ վազքով բարձրացան աստիճանները եւ գրաւեցին լեռը, սակայն հետագային ստիպուեցան դադարներ առնել եւ ապա շարունակել լերան աստիճանները նուաճելու իրենց մարզարշաւը: Այս արշաւը տեւեց մինչեւ կէսօրուան ժամերը, որու ընթացքին մասնակիցները կրցան ապահովել 1625 գանատական տոլար ի նպաստ Մոնթրէալի երեխաներու հիւանդանոցին: Հարկ է նշել որ եղբայր Արպի Խաչատուրեան յաջողեցաւ 33 անգամ ամբողջացնել աստիճաններուն մագլցումը: